



ՆՈՐ ԱՂԲՅՈՒՐ ՄԻՒԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑՈՒ ՄԱՍԻՆ

Մխիթար Այրիվանեցին մեկն է մեր ԺԳ դարի նշանավոր վարդապետներից: Նրա կյանքի և գրվածքների մասին հատուկ ուսումնասիրություններ ունինք գրած\*): այժմ մի փոքր հավելում ունինք կատարելու նոր ձևը բերած մի աղբյուրի մասին:

Բնյութի մեր ազգայիններից պ. Մանասէ Գաբրելյանց կիլիկիո կաթողիկոսարանի մատենադարանին մեր օժման առթիվ նվիրել է յոթ ձեռագիր, դեռևս առանց համարների: Դրանցից մեկի մեջ Մխիթար Այրիվանեցու անունով մի հատված կա, ձեռագրի մեջ ձգ նշանակված, որ ունի այսպիսի վերնագիր. «Ջալստսիկ ժողովեցի ի միասին և գրեցի յաւուրս Ճ և Հ (170) ևս տր Մխիթար վղպս», և ապա մի առ մի թվում է Հին և Նոր կտակարանների և նուրբ գրքերի ցանկը վերջավորելով «իսկ զվերլուծութեցն ոչ գտի»:

Վերնագրի իմաստով, այսինքն 170 օրվա մեջ գրելու նկատողության, տեղեկություն ունինք և նրա ժամանակագրության մեջ\*\*): «Կարգաւորութիւնք գրոց սրբոց, որք ստուգարանեցան ի Սարկաւագ վարդապետէ և գրեցան յինէն ի Տէր Մխիթար վարդապետէս ի մին տուսի յաւուրս ՃՀ», և ավելացնելով ապա ցանկը: Անկարելի էր 170 օրվա մեջ արտագրել Հին և Նոր կտակարանների հետ և նուրբ գրքերը, օր. Փիրոնի,

Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նյուսացու, Գրիգոր աստուածաբանի և ապա Դավթի, Պորփյուրի, Արիստոտելի անունով փիլիսոփայական գրքերի թարգմանությունները: Մենք ցույց ենք տվել այդ խոսքերի իմաստը, որ ճառընտրիի առաջին 370 թերթերին են վերաբերում, ուր ամփոփված են Հին և Նոր կտակարանների ամբողջությունը\*), ջանասեր և իր գործին նվիրված գրչի կողմից անհնարին շէր 170 օրվա մեջ կատարել այդ արտագրությունը, եթե նույնիսկ Աղոթամատուցն (ժամագիրք) ու պատարագն էլ մեջը համարենք, ինչպես ճառընտրիի մեջն է և որոշ մասով համապատասխան է ցանկին: Այսպիսի հասկացողության նպաստավոր է և այն հանգամանքը, որ այդ տեղեկությունը դետեղված է ժամանակագրության 1111—1121 թ. թ., երբ նշանակված Սարկավագ վարդապետի մահը, ասել է, թե Սարկավագ վարդապետի ցանկի մեջ նշանակված էին այն գրքերը Հին և Նոր կտակարանի, որ նա արտագրել է իր ճառընտրի մեջ:

Ժամանակագրության ցանկը և մեր Ձեռագրի հատվածը նման են, բայց ոչ նույն: Մենք մատնանշում ենք տարբերությունները հարկավոր տեղում: Այդ տարբերությունները ցույց են տալիս, որ նրանց վերջնական ձևակերպությունները տարբեր ժամանակների մեջ են կատարված: Մեր հատվածի առավելությունն այն է, որ Մխիթար Այրիվանեցին տալիս է մի փոքրիկ հիշատակարան ՉԼԲ թվականով: Ժամանակագրությունը նա վերջավորել է ՉԼԸ (1291 ըստ Մխիթար հաշվի). նույն թվականին նա գրել է իր արձանագրությունը\*), ճառընտրի համար թվական էինք ընտրել որոշ հիմունքներով 1272—1286—7 թ. թ.:

\*) Մխիթար Այրիվանեցի նորագավիտ արձանագրություն և երկեր. Երուսաղեմ, 1931: Ապա Խաղբակյանք Բ. հատոր. 104—109: Նույնը Գ. հատոր, 192—198:

\*\*\*) Պատկանյանի հրատ. 33: Մենք այժմ ձեռքի տակ չունինք այդ հրատարակությունը, օգտվում ենք Հանդ. Ամս. 1891 «Հ. Գ. Գ.» հոդվածից և Ֆ. Մուրադի «Յայտնութիւն Յովհաննոս աշխատութեանից. ՄՂ և շար.:

\*) Խաղբակյանք Բ. հատոր, էջ 110:

\*) Մեր, Մխիթար Այրիվանեցի, էջ 4—5:

Մեր ձեռագրի տված թվականը՝ ՉԼԲ մեզ հնարավորություն է տալիս ավելի ճշտելու Ճառընտրի գրություն մոտավոր ժամանակը: Այդ թվականը նրա գրության վերջավորության թվականը չէ. «Գրել սկսայկարգ ըստ կարգի»: Խոսք չկա ամբողջի վերջավորության մասին. Ճառընտրի վերջավորության հիշատակարանը ավելի ընդարձակ կլինեի և այլ բնավորությամբ: Այնտեղ չէր կարող տեղեկություն չլինել Պոռչ մեծ իշխանի շինարարության և իր վանքի մասին: Վերջավորել է նա «գաստուածաշունչս ի մի տփի», միայն Հին և Նոր կտակարանի գրքերի ամբողջության իմաստով, և այդ բոլորը գրել է նա 170 օրվա մեջ. իսկ մենք տեսանք, թե 170 օրվա մեջ նա ինչ կարող էր գրած լինել: Հատվածի թվականը ոչ թե վերաբերում է ամբողջ Ճառընտրի գրության վերջավորության, այլ միայն վերև բացատրված մասի: Այդպիսով մենք ունինք Ճառընտրի միայն մի քառորդի վերջավորության թվականը:

Եթե նա ՉԼԲ թվականին վերջավորել է միայն իր Ճառընտրի առաջին 370 թերթը և այդքանը գրել է նա 170 օրվա մեջ, Ճառընտրի ամբողջությունը լրացնելու համար, որ 1200 թերթից ավելի էր, պետք կունենար մեկ և կես—երկու տարի, գուցե, մի քիչ էլ ավելի, որովհետև նա ծեր էր. ՉԼԲ թվականին արդեն 62 տարեկան\*), ուրեմն և անկարող նախընթաց թափով առաջ տանելու իր գրչությունը: Բացի դրանից՝ նա ուներ պաշտոնական ուրիշ պարտավորություններ, որպես Այրից վանքի արքեպիսկոպոս: Համենայն դեպս մենք հաստատուն տեղեկություն ունինք, որ նա

ՉԼԵ թվին զբաղվել է իր գանձերի խմբագրությամբ, որով կարելի է մտածել, որ արդեն վերջավորել էր Ճառընտիրը: Հարյուր տարի հետո Գրիգոր Խլաթեցին օգտրվել է Մխիթարի կազմած ժողովածուից և հիշատակում է իր մի ոտանավոր հիշատակարանի մեջ\*\*) հիշելով Մխիթարի խմբագրության թվականը:

Հ. Ակինյանը մի խոսակցության մեջ մեզ հայտնեց, որ գտել է Մխիթար Այրիվանեցու Ճառընտրի հիշատակարանը. եթե այդ հիշատակարանը տարբեր գրություն է, քան մեր այս հոդվածը, ցանկալի էր շուտով հրատարակված տեսնել, գուցե նորություններ բերեր այդ մեծ աշխատավորի կյանքի, Գեղարդա վանքի, Պոռչ իշխանի մեծագործությունների և այլ պատմական դեպքերի մասին, իսկ եթե մեր ձեռագրի հատվածն է, Ճառընտրի վերջում սպասելիք հիշատակարանը չէ այդ: Դեպքից օգտվելով, ուղղել կկամենայինք մեր մի սխալը «Մխիթար Այրիվանեցի» աշխատության մեջ: Մեղիքսեթ կրոնավորը, որի ստացած «Յայմաուրք»-ից տպել ենք Այրիվանեցու Ստեփանոս Սյունեցու վկայաբանությունները, համարել ենք Ուրծից ոչ հեռու և Ջինջիրուկի Ս. Կարապետից քիչ դեպի հյուսիս, Ղազըլու գյուղի մոտ, Շահապյու և Ս. Խաչ գյուղերի մեջ գտնվող Երերանի վանքի վանահայրը\*), մինչդեռ նա վանահայրն էր Երերան կամ Հերհեր ավանի եկեղեցու, որ Շահունեցի իշխանների կենտրոնն էր\*\*), մյուսը Օրբելյան իշխանների, հատկապես Ջալալ Օրբելյանի, Տարսայիճ մեծի և Մինա Խաթունի որդու իշխանության մեջ:

\*) Անդ, էջ 6:

\*\*) Մեր, Մխիթար Այրիվանեցի և նորագույն աբժանությունները և երկիր, 1931, Երևանում, էջ 16:

\*\*\*) Խաչատրյանը Բ. Հատուր, էջ 165: Նույնը Գ. Հատուր, էջ 79:

\*) Մեր, Մխիթար Այրիվանեցի, էջ 4:



Ձեռագիր Անթիլիասի, նվեր Մանասի գիր, ըստ գրչության ժ.Գ. դարի: Հատ-  
Գարրելյանի, ժողովածու, թուղթ, բոլոր- ված 22:

349 Բ Զայտսիկ ժողովեցի ի միասին Յուդաին: Ա: Եւթն է:  
Եւ գրեցաւ յաւուրս ճ եւ ի հ: Ես Ընդ ուսումնասերն ողոս<sup>3)</sup>  
տրմխիթար վդաւ: (Եղծված է)

22: Յոհու ավետարանն:	ա:		
Մատթէոսին:	բ:	Հոռմայեցոց թուղթն:	ա:
Մարկոսին:	գ:	Կորնթացին	բ:
Ղուկասուն:	դ:	Գաղատացին:	ա:
Գործք առաքելոցն քի:	ե:		
Կաթողիկէքն:		Եփեսացին	ա:
Յակորուն	ա:	Փիլիպպեցին	ա:
Պետրոսին	բ:	Կողոսացին	ա:
Յոհաննուն	գ:	Թեսաղոնիկեցին	բ:
		Եբրայեցին	ա:
		Տիմոթէոսին	բ:
		Տիտոսին	ա:

3) Պատկանյանի հրատարակութեան մէջ զընդ ու-  
սումնասերն եւթաղեայ», որ նույնպէս եղծված է,  
ինչպէս մեր օրինակի մէջ, որ պիտի լինէր «Աղբեր  
եւթաղեայ»: Ողոս» կարծում ենք «Պողոս» բառի  
աղճատումն է, որ վերնագիրը պիտի լինէր ԹԸԼ-  
ԹԵՐԻ:

4) Պողոսի թղթերի դասավորութիւնը ժամանա-  
կագրութեան մէջ այսպէս է. Յայտնութիւնն Յով-  
հաննու ավետարանչի, առ Թեսաղ.Ա., առ Թեսաղ.Ա.,  
առ Նոսին Բ., առ Կորնթացիս Ա., առ նույն երկ-  
րորդն, առ Հոռմայեցիսն, առ Եբրայեցիսն, առ  
Տիմոթէոս Ա., առ Տիտոս, առ Գաղատացիս, առ

Եփեսացիս, առ Փիլեմոն, առ Կողոսացիսն, առ  
Փիլիպպեցիսն, առ Տիմոթէոս Բ.:

Ապա միջանկյալ: «Իսկ ըստ զբութեանն կղեմայ,  
որպէս եղիտ», որ նույնն է մեր ձեռագրի դասա-  
վորութեան հետ, միայն Փիլեմոնը վերջն է:

Մեր ձեռագրի կանկը շուտիկ այս վերնագիրը: Եւ  
նրանից հետո դաւիս է՝ Աղօթածատուցն Մահակայ  
և Մկրտոպայ. պատարագն սուրբ Մանդակունչոյն:  
Ահա կատարեցան նոր կտակարանքն:

2) Պողոսի թղթերի դասավորութիւնը ժամակար-  
գութեան մէջ այսպէս է հայտնութիւնն Հովհաննու  
ավետարանչի առ Թեսաղ, առ Բ.:

350 ա.

Փրկմանն ա:  
 Բնդամենն ժԳ Գլուխ:  
 Յայտնուին յո՞ու  
 Էր ընդ հղբարսն  
 Բարձրացուցէքն խաչի  
 Աղօթամատոյցն:  
 Պատարազն սուրբ:  
 Ահայ կատարեցան նոր կաակ  
 արանքս կամաւքն այ:

Գլուխք հնոց կտակարանաց:<sup>1)</sup>  
 Արարածք՝ որ և ծնունդք:  
 Ելքն յեզրիպտոսէ »  
 Դևտացիքն »  
 Թիւքն իղի »  
 Երկրորդ օրենքն »  
 Յետև որդին նապեայ  
 Դատաւորքն իղի:  
 Հրուսթն  
 Առաջին թգութին  
 Երկդ թգութին  
 Երրդ թգութին  
 Չորդ թգութին  
 Մնացորդքն առաջին  
 և երկրորդ  
 եզրաս բ. գ:

350 բ. գ. Այլաբանութենն ա.  
 ե. Որ ի լինելութե խնդր. ՂԹ  
 դ. Խնդրոց և լուծմանց: ՉԲ:  
 է. Որ ի լինելո. լուծմ. ԿԲ:  
 ը. Երեկեցանն. մ. Խ Գ:  
 թ. Յիլիցն բազմազան ձ կը:  
 Սրբոյն գիղնեսիոսի. և գիրք:  
 ա. Յղգս Երկնային քանկու: Ժե:  
 բ. Վս հիկոյ քնպտու—: Ժդ:

Մակարայեցիքն: Կ.<sup>2)</sup>  
 Ենովքայ տեսիլն  
 Կտակք նահապետացն  
 Ասանեթայ իստողանութիւն:  
 Յուբիթն  
 Տուբիթն  
 Եսթերայ պատմութիւն:<sup>3)</sup>  
 Սաղմոսքն Դաւթի. ձ. Մ.  
 Առակքն Սողոմոնի. գ. գլուխ:  
 Եսայի մարգարէն:  
 Երկոտասան մղբէքն:  
 Երեմիէն:  
 Եզեկիէլն  
 Յոբն  
 Դանիէլն  
 Մահ մգրէիցն  
 Յետև՝ որդի Սիրաքայ  
 Ահայ կատարեցան հինկաւ  
 Կարանքն ի կամս այ:  
 Թիւք նուրբ գրեանց:  
 Փիլոնի իմաստնոյ. Թ. Գիրք:  
 ա. Նախախնամութեցն. Խ. ճառս է:  
 բ. Նահապետացն ա:  
 գ. Հեսեցն սրբոց ա:

Գրիգորի անաբանի. գիրք դ:  
 ա. Քս ծնեալն. ժբ. ճառ է:  
 բ. Յաղթեցայն. ը.  
 գ. Առ որսն ժե.  
 դ. Որս յեզրիպտոսէն. ժբ:  
 Սրբոյն Եւագրեայ. բ. գիրք:  
 ա. Առաջինն Գ. գիրք է. ժթ. ճառ:  
 բ. րկդն. բ. գիրք է. Ղ. ճառ:  
 \* \*  
 Դաւթի փիլիսոփայի  
 Սահմանքն՝ իդ. ճառ է:

1) Ժամանակագրությունը չունի այս վերնագիրը, Հանգ. Ամս. ից դասերով (1891, և՛ 164: Նձյեր Ծ. Մուրադ Էր. ՄՂԲ), Պատկանյանի Հրատարակությունը չունենք ձեռքի տակ:  
 2) Ժամանակագրության մեջ «Չորրորդ» մտակարայեցիք. որ մեք ցանկը ցունի: Սորան հետևում է «Յովսեփա որ է կախախալ քաշանայտեալ» նույն

տես չունի մեր ցանկը:  
 3) Ժամանակագրութեան մեջ փոխում է սորան հետևող գրքերի դասաւորութիւնը. «Եզր Սաղաթիէլ, Յոբն, Երկոտասանքն, Սաղմոսն Դաւթի, Առակքն, Եսայն, Երեմիայ, Եզեկիէլն, Դանիէլն, Մնացորդքն, Ողբք Երեմիայ ի Բաբելոն»: Մեր 2-ի ցանկը չունի «Ողբք Երեմիայ ի Բաբելոն»:

- 4. Յազազս անձային անուանցն՝ ժբ:
- 7. Յզզս խնդանկան անձարանութեանն 4.
- և. Թուղթքն զանազանք. ժբ:
- Մբբոյն բարսղի. 4. զիրք:
- ա. Պահոցն: Լա. ճառ է:
- բ. Հարցողացն: Թ. Կ. Ա.
- գ. Վեցօրեայն Թ:
- Գրիգորի նիւսացւոյ է. զիրք:
- ա. Բնութե գիրքն լի ճառ է:
- բ. Կազմութեան ԼԲ:
- գ. Կուսութեան ի:
- դ. Ժողովողն Լ.
- և. Երգ երգոցն Ժդ.
- զ. Ինն կրանութիքն Ը.
- է. Հայր մեր որ յերկինսն. 4.

Պրօղզ է գէադօխոսն և  
 զամախօսն. մ. Ժա. ճառ է,  
 և նոյնչափ լուծմունք:  
 Բերականն իդ. ճառ է:  
 Հերմէսն ա. ճառ է:  
 Պորփիւրն. Ժա. ճառ է:  
 Մեծին Արիստոտելի. Դ. զիրք:  
 Ստորոգութիքն Ը. իս.  
 Ի պետիառմենիասն. Զ. Թ:  
 Առաքինութեցն. ա.  
 Աշխարհացն. ա:  
 Իսկ զվերլուծութեցն չգտի:)  
 Թ. ՉԼԲ զբեցի. յայրիվանս  
 սպա... (եղծած): աբ Միսի

251 ա. Թար վզպի այրիվանաց մեծի ուխտի: Եռափափաք տենչ-  
 մամ սրտի յօժարեցել գրչի: Չածաշունչս ի մի տփի. և զնուրբ  
 գրեանս որ ի կարգի: Յուսով յած վստահալի, գրել սկսայ կարգ  
 ըստ կարգի Բայց ես տկար ել հեղգոգի, մրմով տարտամ և  
 ցաւալի Չունիմ նիւթ յիս հաճելի, յւրում հոգին ան հանգչի:  
 Արդ՝ պաղատիմ արտասուալի, որք հանդ իպիք այ՝ մատենի:  
 Զիս յիշեցէք ան անաջի, միթէ բաղում մեղք իմ քաւի:

1) Ծառքնարի մեջ մասերը կա՛յին վերլուծակա-  
 նից, թե ոչ, չգիտենք. վերջին մասերը թափած  
 են հիւստարականի հետ: Բայց հիշում է ժամանա-  
 կադրութեան մեջ (Լբ. 39):  
 Մեք 2-ի ցանկի մեջ չկու և այն մասը, որ Այրի-

վանեցին դրել է յայք շճառքնարի մեջ. 369 Բ.  
 Քթիքը զոր սենին հրէային ի ծածուկ և այլն, որ  
 հրատարակված է նախ Վերաբառ-ի մեջ 1895, 408,  
 սպա հրատարակել ենք և մենք Խողբակեանք. Հա-  
 տար Գ. 197—198:

